



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 10 -Ն

ք.Ստեփանակերտ

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ, ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 23-Ի ԹԻՎ 34/120 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 10-րդ մասին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը *որոշում է*.

1. Սահմանել, որ

1) համապետական ընտրությունների ժամանակ ընտրական տեղամասերը կազմավորելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարության զինվորական մասերի ղեկավարները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 50 օր առաջ, զինվորական մասի տեղակայման վայրի համայնքի ղեկավարին, լիազոր մարմին ու կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են զինվորական մասի ընտրողների թիվը.

2) լիազոր մարմին ու կենտրոնական ընտրական հանձնաժողով զինվորական մասի ընտրողների թիվը ներկայացվում է ըստ այն համայնքների, որտեղ քվեարկելու են զինվորական մասի ընտրողները.

3) լիազոր մարմինը, համայնքի ղեկավարն ու տարածքային ընտրական հանձնաժողովը զինվորական մասի ընտրողների թիվը հաշվի են առնում ընտրական տեղամասերը կազմավորելիս.

4) համայնքի ղեկավարը, լիազոր մարմինն ու ընտրական հանձնաժողովները զինվորական մասի ընտրողների թիվը չեն հրապարակում:

2. Սույն որոշման դրույթները վերաբերում են նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության և ոստիկանության գործերին:

3. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 23-ի «Զորամասերում ընտրողների ցուցակներ կազմելու կարգը սահմանելու մասին» թիվ 34/120 որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ